ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/183

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Մասնակից՝ «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցում, էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման եվ պահպանման ծառայությունների (օդորակիչների վերանորոգում և սպասարկում) ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ոառումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11112-2020 գրությամբ «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 22.07.2020թ.-ի թիվ 01/24.3/1238-2020 գրության հիման վրա, 24.07.2020թ.-ին «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 24.07.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 24.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/183 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

31.07.2020թ.-ին և 07.08.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 31.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.08.2020թ.-ին:

2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 22.07.2020թ.-ի թիվ 01/24.3/1238-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2020 թվականի մայիսի 27-ին էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների (օդորակիչների վերանորոգում և սպասարկում) ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից ԱՁ «Գրիգոր Այվազյան»-ը (այսուհետ՝ Մասնակից) սահմանված ժամկետում Ընկերությանը չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի ընդհանուր գնի չափով որակավորման ապահովումը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով հայտարարված գնման

ընթացակարգի շրջանակներում «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.07.2020թ.-ի գրությամբ դիմել է «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11112-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չներկայանալով հրավիրված նիստին, 27.07.2020թ.-ին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ն ներկայացրել է հայտ «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից հրապարակված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման հրավերին:

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման հրավերին հայտ են ներկայացրել երկու մասնակից, որոնցից նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ն՝ 474525 /չորս հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ: 15.06.2020թ. հրապարակվել է թիվ 2 արձանագրությունը այն մասին, որ հաղթող մասնակից է ճանաչվում «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ն և անգործության ժամկետի ավարտից հետո կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր: Նույն օրը հրապարակվում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

26.06.2020թ. «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ի էլ. փոստին է ուղարկվել պայմանագրի նախագիծը և խնդրել են, մեջբերում եմ՝ «օրենքով սահմանված ժամկետներում լրացնել Ձեր ընկերության վավերապայմաններն, հասպատել երկու օրինակից պայմանագրի ապահովման, որակավորման ապահովման և կից գրությամբ ներկայացնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ»:

«Գրիգոր Այվազյան» ԱՁ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պայմանագրի կնքված և ստորագրված երկու օրինակ, պայմանագրի կատարման և որակավորման ապահովման մասին հայտարարությունները մեկական օրինակներից:

Պայմանագրի կատարման ապահովման չափը նշվել է 360000 /երեք հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ, իսկ որակավորման ապահովման չափը նշվել է 474525 /չորս հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ:

13.07.2020թ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գնումների և մատակարարման բաժնի առաջատար մասնագետ Մ. Սողոյանի կողմից ծանուցվել է այն մասին, որ

... «Ձեր կողմից ներկայացված պայմանագրին կից ներկայացվող որակավորման ապահավման մեջ լրացված գումարը չի համապատասխանում պայմանագրի ընդհանուր գնին, հետևաբար հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի բ պարբերությունը, 19-րդ ենթակետը, ինչպես նաև 50-րդ կետը՝ խնդրում ենք մեկ աշխատանքային օրում մինչև 2020թ. հուլիսի 14-ը ժամը 17:00 շտկել նշված անհամապատասխանությունը՝ ներկայացնելով պայմանագրի ընդհանուր գնի չափով որակավորման ապահովում՝ թղթափն տարբերակով, հակառակ դեպքում Ձեր կողմից ներկայացված հայտը կմերժվի:»

Ի պատասխան վերը նշված գրության, հայտնել ենք, որ, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի գ ենթակետի՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տաս տոկոսին: Սույն պարբերությամբ նախատեսված շինարարական աշխատանքի գնման արժեքը հրապարակվում է հրավերում: Եթե գնման հայտով տփալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման, որի դեպքում ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման տեխնիկական հսկողության ծառայությունը, ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում ապահովման գործողության ժամկետը չպետք է պակաս լինի կնքվելիք պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների

մատուցման վերջնաժամկետից, ներառյալ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման համար սահմանված ժամկետը, և ներկայացվում է օրենքի 35-րդ կետով սահմանված կարգով, «ԲԷՅ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով անցկացվող գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 2.4 Մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

Նույն հրավերի 4.3 կետի՝ 1-ին ենթակետի բ) կետի համաձայն Մասնակիցը հայտով ներկայացնում է հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին.

Ելնելով վերոգրյալից հայտնում եմ Ձեզ, որ մեր կողմից ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան որակավորման ապահովում:

Այնուհետև 24.07.2020թ. «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ի էլ. փոստին ստացված Ձեր կողմից ուղարկված նամակից պարզ է դառնում, որ Պատվիրատուն ի դեմս՝ «ԲԷՅ» ՓԲԸ-ի չի կնքել մեր կողմից ներկայացված պայմանագիրը:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ 22.07.2020թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն, առ այն, որ «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և ընտրված մասնակից է ճանաչվել «Անուշ Պետրոսյան « ԱՁ-ն:

Միևնույն ժամանակ Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն փաստի վրա, որ 22.07.2020թ. www.gnumner.am կայքում հրապարակված՝ պայմանագիր կնքելու մասին հայտարարության մեջ, անգործության ժամկետ չի սահմանվել, դրանով իսկ զրկելով «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ին պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը բողոքարկելու՝ բողոքները քննող անձին:

Ելնելով վերոգրյալից գտնում եմ, որ «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ի կողմից չի խախտվել «ԲԷՅ- ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման հրավերին ներկայացրած հայտով ոչ մի հայտարարություն, ուստի խնդրում եմ Ձեզ, «Գրիգոր Այվազյան» ԱՁ-ին չներառել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

«Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն 31.07.2020թ.-ի ներկայացված լրացուցիչ դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին (այսուհետ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով

նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2020/183 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետևնաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև Կարգ/ Կարգի 45-րդ կետի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները համապատասխան հիմքելով, գրավոր ուղարկում է լիազոր մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՅ-ԼՕ-2020/183 ընթացակարգ նախաձեռնելու հիմքը առաջացել է 14.07.2020թ. (14.07.2020թ. ժամը 17:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1 կետը) հիմքում դնելով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու որոշումը:

Այսինքն Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 14.07.2020թ.–ին /թիվ 3 արձանագրություն/, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 22.07.2020թ. հիմքում դնելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելը:

Այնինչ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 14.07.2020թ.–ին և միայն 6 օր անց Պատվիրատուն որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը ելնելով դրանում պայրունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դյայթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով, լիազորված մարմին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր, մասնավորապես ՍՅ-ԼՕ-2019/233, ՍՅ-ԼՕ-2020/57, ՍՅ-ԼՕ-2020/58, ՍՅ-ԼՕ-2020/59, ՍՅ-ԼՕ-2020/60, ՍՅ-ԼՕ-2020/61, ՍՅ-ԼՕ-2020/100 և այլն: Օրինակ թիվ ՍՅ-ԼՕ-2019/233 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տփալները համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.-ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ-ին հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատուիրատուն մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է Լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ-ին հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի

մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տփալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդուդիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում տփալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից...:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որդիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2020/183 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման եվ պահպանման ծառայությունների (օդորակիչների վերանորոգում և սպասարկում) ձեռքբերման նպատակով 27.05.2020թ.-ին հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն:

ii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով, հաղթող մասնակից է ճանաչվել «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն և վերջինիս անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

iv. Հանձնաժողովի 14.07.2020թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի ընդհանուր գնի չափով որակավորման ապահովումը և հանձնաժողովը որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Մասնակցին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից:

v. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 22.07.2020թ.-ի թիվ 01/24.3/1238-2020 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11112-2020 գրությամբ «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման եվ պահպանման ծառայությունների (օդորակիչների վերանորոգում և սպասարկում) ձեռքբերման նպատակով 27.05.2020թ.-ին հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն ճանաչվել է հաղթող մասնակից և վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Հանձնաժողովը 14.07.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի ընդհանուր գնի չափով որակավորման ապահովումը, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները, որոշել է Մասնակցին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 22.07.2020թ.-ի թիվ

01/24.3/1238-2020 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 14.07.2020թ.-ին՝ Մասնակցին պայմանագիր ստորագրելու իրավունքից զրկելու հիմքով, սակայն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 22.07.2020թ.-ի թիվ 01/24.3/1238-2020 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր

հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» Ա/Ձ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.07.2020թ.-ի թիվ 26/26-1/11112-2020 գրությամբ «Գրիգոր Այվազյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/183 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**